

ԼԲ. Ռոփսեանն,
 ԼԳ. Աշոցեանն¹³,
 ԼԴ. Դիմաքսեանն,
 ԼԵ. Բուխա Դիմաքսեանն,
 ԼԶ. Այդ Աբեղեանն,
 ԼԷ. Այդ Դիմաքսեանն
 ԼԸ. Պալունին,
 ԼԹ. Առաւելեանն,
 Խ. Աշահմարեանն¹⁴,
 ԽԱ. Համբուժեանն,
 ԽԲ. Վարասպակեանն¹⁵,
 ԽԳ. Ձինակեանն,
 ԽԴ. Ակեացին,
 ԽԵ. Չարեհաւանեանն,
 ԽԶ. Ընծայեցին,
 ԽԷ. Մանդակունին,
 ԽԸ. Սղկունին,
 Ծ. Երմանթունին,
 ԾԱ. Սպանդունին,
 ԾԲ. Առաւենեանն,
 ԾԳ. Տրունին,
 ԾԴ. Տամբերացին¹⁶,
 ԾԵ. Հանունին,
 ԾԶ. Բժնունին,
 ԾԷ. Քաջբերունին,
 ԾԸ. Մեհնունին,
 ԾԹ. Նախճերին,

¹³ A Գաշոցեանն *փիւ* Աշոցեանն (վերականգնումը կատարել են բոլոր հրատարակիչները. հմմտ. ԼԳ. Գաշոցեանն)

¹⁴ Ըստ Ադոնցի՝ Աշահմարեան = «Ջորանամակ»-ի՝ Աշխադարեան (Հիւսիսային Դուռն... ԻԱ... - Ճ [(100) մարտիկ արք]) (տե՛ս էջ 257. հմմտ. ուշ երկաթագիր Մ – Տ>Դ)

¹⁵ Ըստ Ադոնցի՝ Որսապետն արքունի = Խորենացու՝ Վարաժնունի (տե՛ս էջ 262). ճիշտ է, պատմահայրը արքունի որսապետ-գործակալների տոհմի անուանադիր Վարժ/Վարաժին սերուած է համարել Գեղամեան Գառնիկից, այսինքն՝ կապել է Այրարատի հիւսիս-արեւելեան Վարաժնունիք գաւառի հետ, այնինչ «Ջորանամակ»-ում այդ անունով տոհմ չկայ Արեւելեան կամ Հիւսիսային Դռների պաշտպանների շարքում (սպասելի՜ համապատասխանաբար՝ Մագազացի կամ Նիզի Գնթունի տոհմերի կողքին), այլ միայն՝ Արեւմտեան Դռան (այսինքն՝ Տուրուբերանի նոյնանուն գաւառում). ԺԶ. Վարաժնունի - Յ [(300) մարտիկ արք]): Արեւելեան Դռան՝ ԺԵ. Վիժանունի տոհմանունը (Գագրիկան-ից յետոյ), որը «Գահնամակ»-ում Որսապետ-ից չորս տող ներքեւ է, կարող է կապուել միայն Վասպուրականի հարաւ-արեւելեան Վարաժնունիք գաւառի եւ Վարաժնունի տոհմի հետ (լաւ յայտնի՝ է դ. «Աշխարհացոյց»-ին եւ Թովմա Արծրունուն)

¹⁶ A Տամբերացին *փիւ* Տամբերացին (վերականգնում՝ ըստ Ադոնցի. հմմտ. ուշ երկաթագիր Մ-Տ)